

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ՀԱՅ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԻՈԼՈԳԻԱՅԻ ԳԱՍՄՈՒԹՅԱՆ ՍԵԿՏՈՐ
СЕКТОР ИСТОРИИ АРМ. МЕДИЦИНЫ И БИОЛ. АН АРМ. ССР

Աշխատություններ

№ 1, 1948

Т Р У Д Ե

Լ. Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

17-րդ ԴԱՐԻ ԱԿԱԴԵՎՈՐ ՀՈԼՈՄԵԱԿԱՆ ԲԺԻՇԿ ՀԱՅԱԶԳԻ
ՊՐՈՖԵՍՈՐ ԳԵՎՈՐԳ ԲՈԼՅԻՎԻ

Հայ բժշկագիտության պատմությունը մեղ ծանոթացնում
է մի քանի ականավոր բժիշկների հետ, որոնք անցյալում տեսական կամ զործնական մեծ վաստակ են ունեցել հայ կուլտուրայի պատմության մեջ. Սրանց թվին են պատկանում այնպիսի
խոշոր գիտնական բժիշկներ, ինչպես Միքիթար Հերացին և
Ամերգովլաթ Ամասիացին, Սակայն այդ բժիշկների անունները
հայ գրականությունից գուրս, ընդհանրապես միջնադարյան
բժշկագիտության մեջ անծանոթ են մնացել, չնայած, որ նրանց
թողած մասնագիտական աշխատությունները իրենց արժեքով
գերազանցում են միջնադարյան գիտության պատմությանը ծանոթ շատ օտարազգի բժիշկներից մնացած գրական ժառանգությանը:

Հայ բժիշկների գիտական համբավին մեծ չափով խանգարել է այն հանգամանքը, որ նրանք գրել են իրենց աշխատությունները ոչ թե ժամանակակից բժշկականության պաշտոնական լեզուներով՝ հունարենով, արաբերենով կամ լատիներենով, այլ մայրենի լեզվով՝ հայերեն։ Ունենալով ծայրահեղ գենոկրատիկ հակումներ՝ նրանք հրաժարվեցին նույնիսկ գրաբարից և
գերադասեցին իրենց երկերը գրել պարզ, ժողովրդին միանգամայն հասկանալի ռամկական լեզվով։ Սակայն, մյուս կողմից, եվրոպական բժշկագիտության պատմությունը պահպանել է այնպիսի հայ բժիշկների անուններ, որոնք ապրել ու զործել են Հայաստանից գուրս և իրենց բժշկական աշխատությունները գրած լինելով այլ լեզուներով, բոլորովին անծանոթ են մնացել հայ բժշկագիտությանը և կուլտուրայի պատմությանը։ Սրանց շարքին են պատկանում Բյուզանդիայում շատ հայանի կունանուով հայազգի մի բժիշկ և փիլիսոփա, բյուզանդական կայոր

Կոստանդին Ծիրանեծինը, որն ազգով նույնպես հայ էր, տիրապետում էր հայերին, բայց գրել է հունարեն լեզվով մեզ չհասած մի ինչ որ բժշկական աշխատություն։ Այդպիսի հայ բժիշկներից ամենանշանավորն է 17-րդ դարի Հռոմի ականավոր բժիշկ, իր ժամանակի բժշկագիտության մեջ խոշորագույն ուժուրմատոր, «Հռոմեական Հիպոկրատեն» պատվանունը ստացած պրոֆեսոր Ջորջո (Դեռըդ) Բալյիվին (1668—1707):

Սրա պապը Նոր Զուղայի այն բազմաթիվ վաճառականներից էր, որոնք առևտրական նպատակով 16—17-րդ դարերում գալիս էին Եվրոպա, գլխավորապես իտալական առևտրական կենտրոնները։ Նրա ծնողների, ինչպես և նրա եղիտասարդական կյանքի մասին մենք տեղեկություններ չունենք։ Նույնիսկ մեզ հայտնի չէ նրա իսկական ազգանունը, որովհետեւ Բալյիվի ազգանունը, որով նա հայտնի է գիտությանը, այն իտալական ընտանիքի ազգանունն է, որի մոտ կրթվել ու դաստիարակվել էր Գևորգը։ (Հստ ժամանակի սովորության, շատ մարդիկ փոխում էին իրենց անունը և ընդունում բարերարների, դաստիարակների ազգանունը, ինչպես այդ արել է, ի միջի այլոց, նաև հայտնի բժիշկ Միքայել Պատկանյանը, ընդունելով Բեստեն ազգանունը)։ Բայց որ Բալյիվին պահպանել է իր ազգային հատկություններն ու կապերը, այդ կարելի է եղրակացնել այն փաստից, որ թե ժամանակակից, թե հետագա հետազոտողները նրան միշտ հայ են ճանաչել և շեշտել նրա հայկական ծագումը։

Հայ բժշկագիտության պատմության մեջ Բալյիվին չունի ոչ մի ուղղակի վաստակ։ համենայն դեպս այդպիսին մեզ հայտնի չէ։ Հայ բժիշկները (օրինակ բժիշկ Շեհրիմանյանը) երբեմն նրա աշխատություններից ցիտատներ են բերում առանց իմանալու, սակայն, ծագումով նրա հայ լինելը։

Բալյիվին եղել է խոշորագույն գիտնական, որը շատ մեծ հոչակ էր ձեռք բերել թե իր տեսական կոնցեպցիաներով, թե իր վերաբերմունքով դեպի այն բազմաթիվ խնդիրները, որոնք դրվագ էին թեորետիկ բժշկականության կողմեց ամենօրյա պրակտիկայի առաջ։ Որպես բժիշկ և գիտնական Բալյիվին կազմակերպվել էր շատ շուտ։ Դեռևս 28 արեկան հասակում նա գրել է իր հիմնական աշխատությունը՝ «Բժշկական պրակտիկայի մասին» վերնագրով, որտեղ նա լուսաբանել էր իր բժշկական կոնցեպցիաները։ Շնորհիվ գիտության մեջ իր գրաված դիրքի Բալյիվին շատ ուժեղ ազդեցություն է թողել իր ժամանակի

զիտաւ բժշկական հայացքների վրա։ Հոռոմեական պապը՝ ինուկենտիոս 11-ըդ այնքան էր զարմացել նրա զիտնականության վրա, որ չնոյած նրա երիտասարդ տարիքին, նրան նշանակել էր Սապիենցիայում անատոմիայի և խիբուրգիայի պրոֆեսոր։

Բալյիվին ֆիզիկամեխանիստական (յատրո-մեխանիկական) ուղղության ներկայացուցիչ էր և, իրեն այդպիսին, օրգանիզմի մեջ կատարվող բոլոր փոփոխությունները բացատրում էր միայն մեխանիկական գործուներով։ Իր ծայրահեղ մեխանիցիզմով հանդերձ միենույն ժամանակ նա պարզ զիտակցում էր, որ գործնականում այդ հայացքի խիստ հետևողական կիրարկելը միանգամայն անբավարար է։ Ուստի գործնական հարցերում Բալյիվին ավելի հետևում էր Բնկոնի էմպիրիկ մեթոդոգիային նա պարզ զիտակցում էր զիտողության և փորձի կարևորությունը բժիշկության մեջ, թեալես միշտ որոշ տեղ էր հատկացնում նաև բանականությանը, որը գիտողության հետ կապակցված՝ պետք է նպաստեր բժշկական գիտության հաջողություններին։ Դեպի մեթոդոգիական խնդիրներն ունեցած նրա այդ սուհցումը ստիպում էր նրան հեռու մնալ գործնական խնդիրներն իր թեորիայով հետևողականորեն ճիմավորելուց։

Ժամանակակից բժշկական տեսական հոսանքների ներկայացուցիչների հետ վիճելիս՝ նա միշտ ընդունում էր ավելի խելացիք միջին դիրքի Բողոքելով ամեն տեսակի ծայրահեղությունների գեմ, նա նախասիրաբար թեքվում էր ավելի զեպի փորձի ու զիտողության արդյունքները։

Վերջին ժամանակներս հայ գրականության մեջ հաջորդվում էին իտալական պարբերականներից քաղած ու թարգմանած զանազան տեղեկություններ Բալյիվիի մասին։ Սրանցից հետաքրքրականն է «Ձիուչի» թերթի մեջ տպված ոմն Զիկաչի Կազալիի հոդվածը Ֆիուչի հանքային ջրի մասին, որ ժամանակին գովարանել էր Բալյիվին, Հոդվածի մեջ բերված են հետևյալ տեղեկությունները։

Գևորգ Բալյիվին ծնվել է 1668 թ. Դալմաթիայում, Բագրադյայում (ըստ այլ տեղեկության՝ Լիքա քաղաքում, Նեապոլի մոտ)։ Նրա ծնողները ոչ հասարակ ծագումով հայ գաղթականներ էին։ Բալյիվի աղքանունը կրող իտալական մի ընտանիք իր վրա է վերցրել նրա ուսման հոգսը, որի պատճառով Գևորգը երախտագիտաբար ընդունել է նրա աղքանունը։ Բալյիվին իր ուսումնական աշխատանքը կազմում է Սալերնոյում, Պադուայում և Բոլոնիայում, որտեղ

նա եղել է Մալպիգիի աշակերտ: Քսանութ տարեկան հասակում, երբ նա ապրում էր Հռոմում, ինոկենտիոս պապը մոնսիրնյոր Լաչիզու փոխարքեն նրան է նշանակում Սապենցիայում անտոսիայի և Խիբրուրգիայի ուսուցիչ: Հռոմը երբեք չէր տեսել այնպիսի բազմամբով ուսանողություն, ինչպես Բալյիվիի ժամանակի: Նրա նոր, փայլուն, համարձակ և պերճախոս դասավանդումը բոլորովին հակառակ էր հնացած անցյալ ավանդություններին: Այդ պատճառով, թե իտալական և թե օտար գիտնականները միաձայն հռչակել էին Բալյիվիին որպես «բժշկության ռեփորմատոր», «նորագույն Հիպոկրատես», «բժշկական գիտության լուսատու»:

Նրա աշխատություններն են, բացի վերոհիշյալ «Բժշկական պրակտիկայի մասին» գրքից, «Դիսեռտացիաներ» (Dissertationes), որը տպվել էր 1700 թ., այնուհետև «Եղուու», նրա բնույթի, ֆունկցիայի ու հիվանդությունների մասին»: Ահա այս աշխատության մեջ նա առիթ ունեցավ խոսելու «Ֆիուչի» հանքային ջրի մասին: «Մեծ անատոմը մեռավ Հռոմում 38 տարեկան հասակում 1707 թ., աննկարագրելի վշտի մեջ թողնելով Հռոմը և հատկապես նրա գրական հասարակությունը»: Հոգվածի վերջում բերվում է «Հռոմեական իսկուլապի» բազմաթիվ հրատարակությունների արժանացած լատիներեն աշխատությունների հետեյալ ցուցակը: Լիոնում հրատարակված՝ 1704, 1715, 1745, 1756 թ., Փարիզում՝ 1711 թ., Անտվերպենում՝ 1715, 1719 թ. թ., Բալում՝ 1737 թ., Վենետիկում՝ 1754 թ., Լայպցիգում՝ 1827 թ. և այլն:

Բալյիվի աշխատությունները անցնում էին բերնից բերան (volitant per ora virum):

«Gazzettino» թերթում հաղորդված տեղեկություններն իրենց հետաքրքրության պատճառով տալիս ենք ամբողջությամբ¹ «Ասսուերոյի հեքիաթային և ապշեցուցիչ գյուտերը, որուն մասին երկար զբաղեցավ այս օրերս լրագրութիւնը, առիթ տվին լրագրողներու և գիտնականներու վերհիշելու Գևորգ Բալյիվի անունը, որ թեպետ հայ անուն չերեիր և իտալիո մեջ կտպեր, սակայն զավակ էր Հայաստանի»:

«Մանոթ են այն հարաբերությունները, որ զարերով կային ընդմեջ Հայաստանի և իտալիո: Հայերն իտալական բազմաթիվ քաղաքներու մեջ հարուստ և ծաղկյալ գաղութներ ունեին: Մա-

¹ Բազմավեկ. 1830 թ. փետրվար:

նոթ է այն, որ անոնցմեն շատերը շատ սիրով կընտրեին քժշկաւիան և վիրահատական մասնաճյուղերը Բալյիվին ալ հայերուորդի, թերեւ Նապոլիի մոտ Լիքքա քաղաք ծնած, Պատուայի համալսարանեն քժշկական վկայական առնելով՝ իր կյանքն անցուց 1608 և 1707 ենթեղ:

«Այնքան վաղ էր անոր հանճարը և այնքան զարմանալի էր հմտությունը, որ քիչ ժամանակի մեջ գիտության բարձրագույն գաղաթին հասավ և ինքը եղավ արդի բժիշկներու մեջ առաջինը, որ «Ակնարկ մը մղիչ ջղին» գրքույկով պաշտպանեց և ապացուցեց, թե ինչպիս բժշկելու գործոն դերը մարմնու հաստատուն մասհրուն կողատկանի. այնքան ջերմ հավատացող եղավ այս գիտության, որ ժամանակակիցներն հաստատականներու պարագլուխն համարվեցավ:

«Բալյիվին, երբ Հոռմ հասնելով՝ Ինոկենտիոս ԺԱ-ին ներկայացավ, քահանայապետը այնքան ազդվեցավ անոր գիտութիւննեն, որ թեպետ շատ իրիտասարդ էր, Սապիենցիայի գլուցին անդամապննության և վիրահատության աթոռներ իրեն հանձնեց:

«Այս հանճարից հայ գիտնականին ամենակարճ կյանքը (հազիվ 38 տարեկան էր, երբ մեռավ) ազգելք չեղավ իրեն կանխահամ համբավ մը վաստակելու գիտուններուն մեջ: Այսօր ալ անոր անունը հարգանքով և հատկապես կհիշվի այն աղմուկի մեջ, որու խաչագող Ասուներան բարձրացուց, մինչդեռ բռն Բարձին էր արդի բժիշկներու մեջ ԺՇ գարում, ինք առաջին անգամ գյուտափոր փորձերով այդ վարպետության գոյությունը մատնանշեց:

Բալյիվիի կենսագրության մեջ առկա փոքրիկ տարածայնություններն չեն նսնմացնում նրա գիտական մեծ վաստակը բժշկագիտության ասպարեզում: Մի քանի տարի առաջ պրոֆեսոր Պիետրո Կապարոնիի իտալերեն լույս տեսած աշխատության մեջ հոչակափոր իտալական բժիշկների և բնագետների կենսագրության և գործունեության շարքում նշված է նաև հայազգի Բալյիվիի կյանքն ու դործը:

Այդ գըքում տպված է նաև Բալյիվիի նկարը:

Ինչպես ասացինք, մեզ հայտնի չէ Բալյիվիի դերը հայ բժշկության մեջ: Գոնե մինչեւ այժմ այդ մասին մեղ չեն հասել որևէ տեղեկություններ, Սակայն հայ բժշկագիտության պատմությունն ուսումնասիրելիս՝ երբեմն պատահել են զեպքեր, երբ մեր ձեռքն է

ընկել այս կամ այն բժշկական ձեռագիր, որի հեղինակի մասին մենք մինչև այդ ուսնեինք որոշ տեղեկություններ, առանց իմանալու հայ բժշկության մեջ նրա ունեցած վաստակի մասին։ Այդ պատճառով չի բացառվում, որ հայ բժշկության պատմության հետագա ուսումնասիրության ընթացքում կպարզաբանվեն էջեր, որոնք կարող են լուսաբանել, ունեցել է արդյոք Բալյիվին որևէ վաստակ հայ բժշկության առաջ, թե ոչ Վերջին ենթադրությունը մեզ հավանական է թվում, ի միջի այսց նաև այն փաստից, որ օտարազգի, գլխավորապես Իտալական, գրականության մեջ միշտ շեշտվում է Բալյիվիի հայկական ծագումը, որ ենթագրել է տալիս, որ նա պահպանած է եղել իր հայ ազգային գծերը։

Л. А. ОГАНЕСЯН

ИЗВЕСТНЫЙ РИМСКИЙ ВРАЧ XVII ВЕКА АРМЯНСКОГО ПРОИСХОЖДЕНИЯ ПРОФЕССОР БАЛЬВИ.

Среди врачей армян минувших времен было немало выдающихся лиц, оставивших весьма ценные медицинские труды. Будучи написанными на армянском языке, труды эти не проникли в страницы истории медицины.

Этой судьбы избежали труды тех врачей армян, которые были написаны на иностранных языках. Среди таких врачей армян наибольшую известность приобрел профессор Джорджо Бальви (1668—1707). Он был внуком коммерсанта из Н. Джульфы, ведшего торговлю с итальянскими торговыми центрами.

В истории медицины Бальви известен, как крупный реформатор, получивший прозвище «римского Гиппократа». В борьбе между тогдашними научными течениями Бальви занял умеренную позицию, и, будучи представителем иатро-механического направления в теории, в практике он придерживался эмпирической методологии Бекона. Им оставлено много научных трудов на латинском языке, оказавших в свое время сильное влияние на медицинскую мысль. Видимо, он сохранил большие связи со своими сородичами, так как все итальянские биографы Бальви подчеркивают его армянскую национальность.